ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ամենայն Հայոց Հայրապետը եկեղեցաշեն բարերարներ Լուիզ Սիմոն-Մանուկյանին և տեր և տիկին Նազար և Արտեմիս Նազարյաններին պարգևատրեց 1700-ամյակի շքանշաններով

Սեպտեմբերի 9-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հանդիսապետությամբ, կատարվեց գոհաբանական աղոթք՝ մասնակցությամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, Տ. Փառեն եպս. Ավետիքյանի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Հայրերի: Արարողությանը ներկա էին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու բարերարներից Լուիզ Սիմոն-Մանուկյանն ու տեր և տիկին Նազար և Արտեմիս Նազարյանները, ինչպես նաև Հայ Եկեղեցու բարերարներ տեր և տիկին Ցակուբյաններն ու տեր և տիկին Հաճեթյանները:

Արարողության ավարտից հետո Վեհափառ Հայրապետն իր օրհնության խոսքն ուղղեց ազգային բարերարներին և մեծաթիվ հավատավոր ժողովրդին՝ ի մասնավորի նշելով, որ հավատի այս տաճարը կառուցվել է հանգուցյալ ազգային հերոս և բարերար Ալեք Մանուկյանի միջոցներով ու իր զավակներ Ռիչարդ և Լուիզ Սիմոն Մանուկյանների ազնիվ նվիրատվություններով, որոնք իրենց հանգուցյալ ծնողների երազն իրականություն դարձրին իրենց եկեղեցանվեր ու ազգանվեր գործունեությամբ:

Ապա Վեհափառ Հայրապետը արարողությանը ներկա եկեղեցաշեն բարերարներ Լուիզ Սիմոն-Մանուկյանին և տեր և տիկին Նազարյաններին, իրենց ազգանվեր գործունեության համար, պարգևատրեց 1700-ամյակի հոբելյանական շքանշաններով:

Արարողությունից հետո եկեղեցական թափորն ուղղվեց դեպի Ս. Տրդատ արքայի մատուռ՝ կառուցված տեր և տիկին Նազարյանների բարերարությամբ: Մատուռում կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ ազգային բարերարների ընտանիքների և մեր ժողովրդի ննջեցյալների հոգիների հանգստության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅԳԵՂԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԻՍԱԳԵՂԻՆԻՑՈՒՄԱՐՇ ԿԻՈԵԱՌ-00/1 ՊՈՒԵՖԿՍԵՎՄՈ ՊԿՄՍՐ ՄՈՒՍԱՅԱՇ ԵՎ ՀՏԳԼՈՆՅԵՌՆ ՎՈՄՓՈՒԳԻ

ԿԽՈՐՀՐԴԱՅԻՆ-ՊԱՏԿԱՄ ՃԿԱՄԵՆ Է ԱՅՍՊԱՏՄԻԵԹՅՈՒՆ ԻՍՐԱԵԼՅԱՆԾՈ ԿԽՈՒԵՍՈՒ-00/1
ՄԱՍՑԵԼԵԿԵԼ ՀԵՏՈ ՇԿՈՒՄԲՈՒՄՈՎ ԱՄԲԽԱՆ. Ո ԿՈՒՆԵԼԱ ՆՏԵՑԵՆՀՅԵՆՏ ՎՈՓՈՒԵՐ.